## II. 2008 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ «2008 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ»

«2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրում» ներառված, հաշվառված թվով 421 անուն, սակայն աշխատանքների քանակով 443 միավոր ծածկագրերով (պարբերականությունը հաշվի առած՝ 1880 միավոր աշխատանք) վիճակագրական աշխատանքները կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Վիճակագրական աշխատանքներն (ցուցանիշները) իրականացվում (հաշվարկվում) են Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հիմնած և վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման որակի, պարբերականության, ինչպես նաև տեղեկատվության տարածման միասնական չափորոշիչներ (ստանդարտներ) սահմանող «Տվյալների տարածման ընդհանուր համակարգին» (ՏՏԸՀ) և «Տվյալների տարածման հատուկ ստանդարտին» (ՏՏՀՍ) համապատասխան:

Թվարկվածներից ՏՏԸՀ-ին Հայաստանի Հանրապետությունն անդամագրվել է դեռևս 2001թ. մարտի 29-ին, իսկ 2003թ. նոյեմբերի 7-ին Հայաստանի Հանրապետությունն անդամակցեց ՏՏՀՍ-ին (տես՝ ԱՄՀ http://docs.armstat.am/nsdp/ ինտերնետային էջը), ըստ այդմ կատարելով նաև կարևոր քայլ՝ ուղղված երկրի վիճակագրական համակարգի համապատասխանեցմանը վիճակագրության ոլորտում միջազգային կարևոր ստանդարտներից մեկին:

2008թ. ապրիլի 29-ին Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական նստաշրջանում Հայաստանն ընտրվել է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի նոր անդամ: Անդամակցությունը չորս տարի ժամկետով է՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:

ՀՀ ԱՎԾ 2008 թվականին կատարած աշխատանքները սույն հաշվետվության մեջ ներկայացված են վերոհիշյալ համակարգի հատվածներին, ինչպես նաև **«2008 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի»** (դրա հավելվածների) կառուցվածքին (հաջորդականությանը) համապատասխան:

# 1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

## *1.1. Ազգային հաշիվներ, համախառն ներքին արդյունքի ցուցանիշ*[1]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 19 աշխատանքներ (111001-111007, 112001-112012 ծածկագրեր) իրականացվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Իրականացված աշխատանքների մասով հաշվարկվել են.

*1.ամսական կտրվածքով՝*

- ✓ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշը օպերատիվ և նախնական տվյալներով,
- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը մեկ շնչի հաշվով օպերատիվ և նախնական տվյալներով,

*2.եռամսյակային կտրվածքով՝*

- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը նախնական տվյալներով.
  - արտադրական եղանակով՝ տնտեսության ճյուղերով,
  - ծախսային եղանակով՝ ըստ վերջնական օգտագործման տարրերի,

*3.տարեկան կտրվածքով հաշվարկվել և մշակվել են.*

- ✓ ՀՆԱ-ի ցուցանիշը մեկ շնչի հաշվով՝ 2006թ. վերջնական հաշվետու տվյալներով և 2007թ. վերանայված հաշվետու տվյալներով,
- ✓ եռամսյակային ՀՆԱ-ի հաշվարկը (2006թ. եռամսյակները՝ ճշգրտված 2006թ. վերջնական հաշվետու տարեկան տվյալների հիման վրա և 2007թ. եռամսյակները՝ վերանայված 2006թ. հաշվետու տարեկան տվյալների հիման վրա),
  - արտադրական եղանակով՝ տնտեսության ճյուղերով,
  - ծախսային եղանակով՝ ըստ վերջնական օգտագործման տարրերի,
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը բազիսային տարվա մշտական, միջին տարեկան գներով.
  - 2006թ. ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
  - 2007թ. ՀՆԱ-ն վերանայված՝հաշվետու տվյալներով,
- ✓ ՀՆԱ-ի հաշվարկը բազիսային տարվա մշտական, միջին տարեկան գներով՝ սեզոնային ճշգրտումներով.
  - 2006թ. ՀՆԱ-ն վերջնական՝ հաշվետու տվյալներով,
  - 2007թ. ՀՆԱ-ն վերանայված՝հաշվետու տվյալներով,
- ✓ 2006թ. եռամսյակային ՀՆԱ-ի հաշվարկը եկամուտների ձևավորման եղանակով հաշվետու տվյալներով:

---

[1] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

*2006 թվականի հաշվետու տվյալներով իրականացվել են հետևյալ հաշվարկները.*

- ✓ արտադրության հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության ճյուղերի և հատվածների,
- ✓ եկամուտների ձևավորման հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության ճյուղերի և հատվածների,
- ✓ սկզբնական եկամուտների բաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության հատվածների և ծախսային տարրերի,
- ✓ տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ եկամուտների երկրորդային բաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ բնաիրեղեն ձևով եկամուտների վերաբաշխման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ ճշգրտված տնօրինվող եկամուտների օգտագործման հաշվի՝ ըստ հանրապետության և տնտեսության հատվածների,
- ✓ կապիտալի հետ գործառնությունների հաշվի՝ ըստ հանրապետության, տնտեսության ճյուղերի և հատվածների,
- ✓ ֆինանսական և ոչ ֆինանսական կազմակերպությունների հատվածների ավելացված արժեքի (արտադրական եղանակով) տարեկան հաշվարկ ըստ ենթահատվածների,
- ✓ ազգային հարստության բաղադրիչների հաշվարկը,
  - վիճակագրական դիտարկման դաշտում ընդգրկված կազմակերպությունների հիմնական միջոցների արժեքը հաշվեկշռային և մնացորդային արժեքներով՝ ըստ հանրապետության և տնտեսության ճյուղերի 2007 թվականին,
- ✓ բնակչության տնային գույքի կուտակման հաշվարկը 2007 թվականին:

Եվրոպական հաշիվների համակարգ-95-ի (ԵՀՀ-95) պահանջներին համապատասխանեցնելու նպատակով, ինչպես նաև հաշվի առնելով վիճակագրական տեղեկատվության հիմնական սպառողների առաջարկությունները, մասնավորապես համադրելի ժամանակային շարքերի ներդրման անհրաժեշտությունը, իրականացվել է նաև 2000-2004թթ. արտադրության հաշվի տարեկան ցուցանիշների վերագնահատում (հետհաշվարկ)՝ ըստ Տնտեսական գործունեության տեսակների հայաստանյան դասակարգչի (ՏԳՏՀԴ), որն արտացոլվել է «Հայաստանի ազգային հաշիվներ, 2008» վիճակագրական ժողովածուում:

## 1.2. Արտադրություն (ծառայություններ)[2]

### *1.2.1.Արդյունաբերություն*[2]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 աշխատանքները (121001, 121003,121006, 121008-121012, 121014-121017 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Արդյունաբերության գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 1-ը՝ ամսական և 6-ը՝ տարեկան պարբերականությամբ):

Արդիականացվել է արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների վիճակագրական դաշտը և դրանով պայմանավորված՝ շարունակվել են 2008թ. մոնիթորինգում ընդգրկված նոր կազմակերպությունների գործունեության տեսակների վերածածկագրման աշխատանքները:

Ընտրանքային դիտարկման մեխանիզմների կիրառմանը զուգահեռ, առանձին արտադրությունների գծով (ըստ ցածր առաձգականությամբ արտադրանքների արտադրության բազային ցուցանիշների) իրականացվել է չդիտարկվող (չհաշվառվող) դաշտի գնահատում՝ օգտագործելով ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ ընտրանքային հետազոտությունների արդյունքները:

Եվրամիության երկրներում կիրառվող Արտադրանքի դասակարգումն ըստ գործունեության տեսակների դասակարգչի (ԱԴԳՏ) ներդրման հետ կապված, 2008թ. ավարտվել են աշխատանքները՝

- ներկայումս հաշվառվող բնեղեն արտադրատեսակների անվանումները նոր ստանդարտներին համապատասխանեցման ուղղությամբ,
- հաշվառվող արտադրատեսակների վերածածկագրման (անվանումները նոր դասակարգչին համապատասխանեցման) ուղղությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են արդյունաբերությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, տնտեսական գործունեության տեսակների, արտադրատեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

---

[2] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

### *1.2.2. Գյուղատնտեսություն* [3]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 31 աշխատանքները (122001-122003, 122005 - 122025, 122037 - 122038, 122040 -122044 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գյուղատնտեսության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 26 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 4 հարցաթերթերով, ինչպես նաև 4 տեղեկանքներով: Ընդ որում, պետական վիճակագրական հաշվետվություններից և հարցաթերթերից 9-ն ամսական պարբերականությամբ են, 7-ը՝ եռամսյակային և 14-ը՝ տարեկան: Հաշվետվություններից և հարցաթերթերից 11-ը բուսաբուծության գծով են, 11-ը՝ անասնաբուծության, 2-ը՝ բուծաբուծության և անասնաբուծության, 5-ը՝ գյուղատնտեսությանն առնչվող այլ բնույթի են, իսկ 1-ը՝ անտառային տնտեսության վերաբերյալ է:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցից (201 գյուղական համայնք, 7638 գյուղացիական տնտեսություն) 4 հարցաթերթերի միջոցով հավաքագրվել է տեղեկատվություն բուսաբուծության և անասնաբուծության, արտադրված բուսաբուծական և անասնաբուծական մթերքի ծավալի, միջին բերքատվության, տնտեսություններում արտադրված մթերքի ըստ ուղղությունների իրացման և դրանց արտադրության վրա կատարված ընթացիկ ծախսերի վերաբերյալ և այլն:

Տեղեկատվություն արժանահավատության ապահովման նպատակով հրապարակելու նպատակով իրականացվել են հանրապետությունում հունվարի 1-ի դրությամբ անցկացված համատարած հաշվառման արդյունքների ընտրանքային ստուգումներ և դրանց հիման վրա կատարվել համապատասխան ճշգրտումներ՝ թիվ 1 և 2 տեղեկանքներով:

Գյուղատնտեսության վիճակագրության ընտրանքային դիտարկման ցանցի վիճակագիրների կողմից անց է կացվել հացահատիկային մշակաբույսերի բերքահավաքի որակի հետազոտություն, որի արդյունքները զետեղվել են «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

Անտառային տնտեսության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են մեկ եռամսյակային պետական վիճակագրական հաշվետվության ձևով, որի արդյունքները զետեղվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցի եռամսյակային թողարկումներում:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են գյուղատնտեսությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

---

[3] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

2008թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից 3-րդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-208-Ն), որը դեկտեմբերի 23-ին վավերացվել է ՀՀ Նախագահի կողմից և պաշտոնապես հրապարակվել դեկտեմբերի 30-ին՝ ՀՀ պաշտոնական տեղեկագիր թիվ 2008/76 (666)-ում:

### *1.2.3. Զկնորսություն, ձկնաբուծություն*[4]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի 1 ծածկագրով ամսական պարբերականությամբ աշխատանքը (123001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Զկնորսության ու ձկնաբուծության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են մեկ պետական վիճակագրական հաշվետվության ձևով, որի արդյունքները յուրաքանչյուր ամիս զետեղվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

### *1.2.4.Շինարարություն* [4]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 12 աշխատանքները (124001-124006, 124008-124013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Շինարարության գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են թվով 8 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 4-ը՝ ամսական և 4-ը՝ տարեկան պարբերականությամբ):

2008 թվականի ընթացքում հաշվարկվել են հանրապետությունում իրականացված շինարարության հիմնական ցուցանիշները ամսական պարբերականությամբ և ըստ մարզերի՝ եռամսյակային կտրվածքով, իրականացվել է անհատական բնակելի շենքերի և մասնավոր շինարարական օբյեկտների դիտարկում, պարբերաբար անցկացվող շրջագայությունների միջոցով արդիականացվել է բնակչության միջոցների հաշվին կառուցված նոր շինարարական օբյեկտների ցանկը:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են շինարարությունը բնութագրող հիմնական ցուցանիշները ըստ ՏԳՏՀԴ-ի, ֆինանսավորման աղբյուրների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

---

[4] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

*1.2.5. Տրանսպորտ*[5]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 21 աշխատանքները (125001– 125017, 125019, 125020, 125022, 125023 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Տրանսպորտի գծով վիճակագրական տեղեկությունները հավաքագրվել և մշակվել են թվով 21 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (որոնցից 5-ը՝ ամսական, 4-ը՝ եռամսյակային, 12-ը՝ տարեկան պարբերականությամբ): Ընդ որում, ավտոմոբիլային տրանսպորտի՝ 5, օդային տրանսպորտի՝ 7, երկաթուղային տրանսպորտի՝ 3, քաղաքային էլեկտրատրանսպորտի՝ 3, ավտոմոբիլային ճանապարհների՝ 1 և հիմնական միջոցների գծով՝ 1 հաշվետվության ձևերով, իսկ 125006 ծածկագրով «Ճանապարհատրանսպորտային պատահարներ» վիճակագրական աշխատանքը կատարվել է ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ:

Ըստ ՏԳՏԴ և ԱԴԳՏ Հայաստանի դասակարգիչների, ավտոմոբիլային, երկաթուղային և օդային տրանսպորտի հասկացությունների ավելացման անհրաժեշտությամբ, ինչպես նաև որոշ ցուցանիշների հստակեցմամբ պայմանավորված, փոփոխության է ենթարկվել «Ճանապարհատրանսպորտային պատահարների մասին» ձև թիվ 35-Պատահար (ամսական) պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման հրահանգը:

Աշխատանքներ են իրականացվել վարչական ռեգիստրների կատարելագործման և տրանսպորտի ոլորտի վիճակագրական հաշվառման դաշտի արդիականացման ուղղությամբ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են տրանսպորտի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշները ըստ հանրապետության, մարզերի, տրանսպորտի տեսակների, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

*1.2.6. Կապ*[5]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 11 աշխատանքները (126001-126011 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Կապի համակարգի գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական, 2 եռամսյակային և 8 տարեկան պարբերականությամբ:

[5] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

Ըստ ՏԳՏԴ և ԱԴԳՏ Հայաստանի դասակարգիչների, կապի ոլորտի հասկացությունների փոփոխության արտացոլման անհրաժեշտությամբ, ինչպես նաև որոշ ցուցանիշների հստակեցմամբ պայմանավորված, փոփոխության է ենթարկվել «Կապի առանձին ծառայություններից ստացված եկամուտների մասին» ձև թիվ 13-ԿԱՊ (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվությունը և դրա լրացման հրահանգը:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են կապի ոլորտը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

### *1.2.7. Առևտուր և այլ ծառայություններ* [6]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 13 աշխատանքները (127001-127013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Առևտուր և այլ ծառայությունների գծով վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 11 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1 տեղեկանքով և 1 դիտարկման ձևով՝ (8 ամսական, 1 եռամսյակային, 4 տարեկան), որոնցից 9-ը՝ առևտրի (5-ը՝ ամսական, 1-ը՝ եռամսյակային և 3-ը՝ տարեկան պարբերականությամբ), 3-ը՝ ծառայությունների (ամսական պարբերականությամբ) և 1-ը՝ առևտրի և ծառայությունների գծով (տարեկան պարբերականությամբ):

Երևան քաղաքում հաշվառված սպառողական ապրանքների շուկաներում պարբերաբար անց են կացվել ընտրանքային դիտարկումներ ըստ ապրանքային խմբերի (պարենային, ոչ պարենային), վաճառատեղերի քանակի, մեկ վաճառատեղի մեկ օրվա առևտրի շրջանառության ծավալի: Ընտրանքային դիտարկման նյութերն օգտագործվել են տեղեկատվական ամսական զեկույցներում:

Կատարվել են պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների մուտքագրման, մշակման և ամփոփ ելքային աղյուսակների ստացման համար համակարգչային ծրագրի փոփոխություններ և լրացումներ:

Սահմանված պարբերականությամբ (ամսական, եռամսյակային և տարեկան) մշակվել և ամփոփվել են առևտուրը և ծառայությունները բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ հանրապետության, մարզերի, ինչպես նաև եռամսյակային պարբերականությամբ՝ ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի:

[6] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

### *1.2.8. Կազմակերպությունների ֆինանսական գործունեությունը*[7]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի թվով 6 աշխատանքներ (128001-128006 ծածկագրեր՝ 2-ը եռամսյակային և 4-ը տարեկան պարբերականությամբ) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2008 թվականին տվյալների հավաքագրումն իրականացվել է ընտրանքային եղանակով՝ վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված կազմակերպություններից պետական վիճակագրական հաշվետվությունների հավաքագրման միջոցով: Կազմակերպությունների ընտրանքը կատարվել է ՀՀ ԱՎԾ բիզնես-ռեգիստրի 10524 գործող կազմակերպություններից բաղկացած արդիականացված բազայից:

«Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքի հոդված 2-ի դասակարգմամբ, ՀՀ ԱՎԾ կողմից հետազոտվող կազմակերպություններն ըստ աշխատողների թվաքանակի որոշվող չափերի, խմբավորվել են 2 խմբի՝ խոշոր ու միջին կազմակերպություններ և փոքր ու գերփոքր կազմակերպություններ: Ընդ որում, 1316 խոշոր և միջին կազմակերպությունները հետազոտվել են համատարած, իսկ 9208 փոքր և գերփոքր կազմակերպությունների բազայից (ընտրանքի գլխավոր համակցությունից) շերտավորված ընտրանքի մեթոդով՝ ըստ մարզերի, հիմնական գործունեության տեսակի և աշխատողների միջին ցուցակային թվաքանակի, ընտրվել են 824 կազմակերպություններ: Հետազոտված փոքր և գերփոքր կազմակերպությունների տվյալները տարածվել են ընտրանքի գլխավոր համակցության վրա: Նախապես ճշգրտվել են ընտրանքում ընդգրկված կազմակերպությունների գործունեության հիմնական տեսակի ծածկագրերն ըստ ՏԳՏԴ-ի:

Մշակվել և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի հաստատմանն են ներկայացվել «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ ձև թիվ 1-ՏԳ (տարեկան և եռամսյակային)» և «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ ձև թիվ 1-ՏԳ փոքր (տարեկան)» պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգները:

[7] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

*1.3. Գներ և սակագներ*[8]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 57 աշխատանքները (131001-131031, 132001-132008, 133001-133006, 134001-134005, 135001, 136002, 137001-137005 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են հետևյալ գների ինդեքսները.

- ✓ սպառողական գների ինդեքս (ըստ հանրապետության և 12 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 470 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչներով,
- ✓ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս (ըստ հանրապետության և հետազոտվող 11 արդյունաբերական ճյուղերի),
- ✓ գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքս (ըստ հանրապետության, իրացման ուղիների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի),
- ✓ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների),
- ✓ բեռնառաքումների սակագների ինդեքս (ըստ հանրապետության, տրանսպորտի տարատեսակների (երկաթգիծ, օդային, ավտոմոբիլային և խողովակաշարային)),
- ✓ արտաքին առևտրի գների ինդեքս՝ մշակվել են եռամսյակային կտրվածքով, 3 ուղղություններով՝ ըստ բոլոր երկրների, ԱՊՀ երկրների և այլ երկրների:
- ✓ 95 անվանում կարևորագույն ապրանքատեսակների գների օպերատիվ 10-օրյա դիտարկում (ըստ հանրապետության և հետազոտվող 12 բնակավայրերի, որի հիման վրա կատարվում է գնաճի հաշվարկ (օպերատիվ գնահատական) հանրապետությունում),
- ✓ շինարարության գների ինդեքսների լրահաշվարկներ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից մշակվող շինարարության գների ինդեքսների հիման վրա:

Կատարելագործվել է արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանությունը և վերանայվել հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ընտրանքը: Պատրաստված տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմվել են գների ինդեքսների հաշվարկման ծրագրատեխնոլոգիական փաթեթները:

---

[8] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

Իրականացվել են գների ինդեքսների փորձնական հաշվարկներ ՏԳՏԴ և ԱԴԳՏ դասակարգիչների կիրառմամբ: 2009 թվականից արտադրողների գների ինդեքսների հաշվարկները Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ կիրականացվեն վերոհիշյալ միջազգային չափանիշներին համապատասխան:

ՀՀ բոլոր տարածաշրջանների 201 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 7638 գյուղացիական տնտեսություններում (նախորդ տարիների 200 գյուղական բնակավայրերի և 7600 գյուղացիական տնտեսությունների փոխարեն) կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների, քանակի ու ծավալների ամենամսյա հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսներն իրացման 3 ուղիներով (մթերող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, գյուղատնտեսական մթերքի շուկայում (61 ապրանքատեսակ)), և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ (92 անվանում արտադրության միջոցներ):

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ) և տարեկան կտրվածքներով: *ՀՀ մակրոցուցանիշների վերահաշվարկման, մասնավորապես, ՀՆԱ-ն հաստատուն գներով հաշվարկելու համար իրականացվել է 2005թ. նկատմամբ 2005-2007թթ. եռամսյակային գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ ըստ ՀՆԱ-ի առանձին բաղադրատարրերի:*

ՀՆԱ-ի և ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների ծրագրի իրականացման նպատակով, 2008թ.-ին ՀՀ ԱՎԾ նախաձեռնությամբ և ՌԴ Վիճակագրության դաշնային ծառայության փոխհամաձայնությամբ, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) հետ, ԱՊՀ տարածաշրջանում և եվրոպական ու այլ երկրների մասնակցությամբ, կազմակերպվել և իրականացվել է սպառողական գների (սակագների) դիտարկման մեծածավալ աշխատանք, որի արդյունքների համակարգումը և տվյալների ամփոփումն ԱՊՀ տարածաշրջանում իրականացնելու է ՌԴ Վիճակագրության դաշնային ծառայությունը, իսկ գլոբալ առումով՝ՏՀԶԿ-ի կողմից:

Համաշխարհային բանկի կողմից միջազգային գլոբալ համադրումների ծրագրի շրջանակում ազգային արժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման աշխատանքների 2005թ. վերջնական արդյունքներն ամփոփվել և հրապարակվել են ժողովածուի տեսքով, որում արտացոլվել են աշխարհի 146 երկրների, այդ թվում նաև Հայաստանի գլոբալ համադրումների արդյունքները («Global Purchasing Power Parities and Real Expenditures, 2005 International Comparison Program»):

1.4.Աշխատանքի շուկա[9]

*1.4.1.Զբաղվածություն և գործազրկություն* [9]

Ծրագրով նախատեսված սույն ոլորտի վիճակագրական 7 աշխատանքները (141001-141007 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 5 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ ամսական, 2-ը՝ եռամսյակային և 2-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Արդիականացվել և ընդլայնվել է ոչ միայն տեղեկատվություն ներկայացնող վիճակագրական միավորների ցանկը, այլ նաև սկզբնական տվյալների էլեկտրոնային բազաներ ներկայացնողների քանակը:

Կատարելագործվել են և՛ սկզբնական և՛ ամփոփ տվյալների մշակման համակարգչային ծրագրերը, ընդլայնվել ելքային աղյուսակների ցանկը:

Տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվության ինտեգրման հիման վրա հաշվարկվել են ՀՀ աշխատանքային ռեսուրսների հաշվեկշիռը՝ ըստ մարզերի և զբաղվածների թվաքանակն՝ ըստ մարզերի, տնտեսական գործունեության տեսակների, տնտեսության հատվածների:

ՏՏՀՄ աշխատանքի վիճակագրության մեթատվյալները (հայերեն, ռուսերեն և անգլերեն) համապատասխանեցվել են Տվյալների որակի գնահատման համակարգի պահանջներին և արդիականացվել:

*1.4.2.Կենսամակարդակ եվ աշխատավարձ*[9]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների (142001 և 142002 ծածկագրեր) մասով հաշվարկվել են եռամսյակային պարբերականությամբ՝ դրամական եկամուտները և ծախսերը և տարեկան պարբերականությամբ՝ դրամական եկամուտների և ծախսերի հաշվեկշիռը:

142003-142009 ծածկագրերով վիճակագրական 7 աշխատանքները (վարձու աշխատողների աշխատավարձն ըստ սեռի, մարզերի, գյուղ/քաղաք կտրվածքի, տնտեսական գործունեության տեսակների, հատվածների, վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության չափի, աշխատավարձի ժամկետանց պարտքի, գործատուի կողմից աշխատուժի վրա կատարված ծախսերի) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Վիճակագրական տեղեկություններ են հավաքագրվել և մշակվել թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով՝ 1 ամսական, 2 եռամսյակային և 4 տարեկան: Շարունակվել է հաշվետվային ձևերի համակարգչային մշակման ծրագրերի արդիականացումը: Ընդլայնվել է ելքային աղյուսակների ցանկը և տեղեկատվություն ներկայացնող վիճակագրական միավորների ցանկը:

[9] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

## 1.5. Բիզնես ռեգիստր[10]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքները (150001 և 150002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում:

Վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունից և ՀՀ կառավարությանն առնթեր պետական եկամուտների կոմիտեից, սահմանված կարգով, ստացվել են իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալներ, որոնք մշակվել և համադրվել են բիզնես ռեգիստրի տվյալների արդիականացման նպատակով:

Բիզնես ռեգիստրի ձևավորման և արդիականացման նպատակով ՀՀ ԱՎԾ մարզային գործակալություններից, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումներից ստացվել, համադրվել և ամփոփվել են իրենց վիճակագրական մոնիթորինգներում առկա առևտրային իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բազաները:

2008թ. իրականացվել է 13000 առևտրային իրավաբանական անձանց և 5500 անհատ ձեռնարկատերերի 2007թ. տնտեսական գործունեության վերաբերյալ տեղեկատվության (գտնվելու վայրի, գործունեության հիմնական և ոչ հիմնական տեսակների, աշխատողների թվաքանակի, ինչպես նաև գործելու կամ չգործելու վերաբերյալ տվյալներ) արդիականացումը:

Կատարելագործվել են.

- անհատ ձեռնարկատերերի և իրավաբանական անձանց բիզնես (ձեռնարկատիրական) ռեգիստրի հարցաթերթը և լրացման հրահանգը,
- տեղեկատվության ստուգաճշտման, մուտքագրման և վերլուծության համակարգչային ծրագրերը:

## 1.6. Մասնավորեցում[10]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 1 վիճակագրական աշխատանքը (160001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից ներակայացվող մասնավորեցման արդյունքների վերաբերյալ տեղեկանքները զետեղվել են «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում:

[10] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

## 1.7.Վիճակագրական դասակարգիչներ[11]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքները (170001 և 170002 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում: Տեխնիկատնտեսական ու սոցիալական տեղեկատվության դասակարգիչների ներդրման նպատակով, հիմք ընդունելով Եվրոպական Համայնքների վիճակագրական ծառայության կողմից հաստատված ՏԳՏԴ-ի նոր խմբագրությունը (NACE Rev. 2) իրականացվել է ՏԳՏԴ-ի 2007 թվականի վերանայված տարբերակի թարգմանություն և տեղայնացում (մաս 1՝ դասակարգիչ, մաս 2՝ պարզաբանումներ, մաս 3՝ այբբենական անվանացանկ մաս, 4՝ ծածկագրերի համապատասխանության աղյուսակ): ՏԳՏՀԴ-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ կատարվող աշխատանքների համատեքստում, մինչ ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտների ազգային ինստիտուտ պետական փորձաքննությանը ներկայացնելը, դասակարգչի փոփոխությունների և լրացումների նախագիծը համապատասխան գրություններով կարծիքի է ներկայացվել նաև շահագրգիռ նախարարություններին և գերատեսչություններին, ինչպես նաև զետեղվել ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքէջում՝ այլ սպառողների առաջարկությունների և դիտողությունների ստացման ակնկալիքով:

Զուգահեռաբար, շարունակվել են նաև պետական վիճակագրության բնագավառում ՏԳՏԴ-ի և ԱԴԳՏ-ի ներդրման ուղղությամբ իրականացվող աշխատանքները: Մասնավորապես, մի շարք վիճակագրական դիտարկման փաստաթղթեր և դրանց լրացման հրահանգներ (մեթոդական ցուցումներ) արդեն իսկ համապատասխանեցվել են նաև դասակարգիչներով սահմանված սկզբունքներին և մոտեցումներին:

Եվրախորհրդարանի 2003թ. մայիսի 26-ի թիվ 1059/2006 որոշմամբ հաստատված «Տարածքային միավորումների անվանացանկ վիճակագրության համար» (ՏՄԱ) դասակարգչի ՀՀ-ում ներդրման նպատակով կատարվել են ուսումնասիրություններ, որտեղ հաշվի են առնվել տարածաշրջանային քաղաքական, վարչական և ինստիտուցիոնալ գործոնները: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա անհրաժեշտություն է առաջացել այս տարածքային դասակարգիչը ձևակերպել իրավական առումով և ներդնել հստակ կանոններ, որը կներկայացվի շահագրգիռ մարմինների քննարկմանը:

## 1.8. Պետական ռեգիստր[11]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 1 վիճակագրական աշխատանքը (180001 ծածկագիր) կատարվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից ներակայացվող գրանցված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի, ինչպես նաև ՀՀ-ում օտարերկրյա առևտրային իրավաբանական անձանց վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվել է «ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցներում:

---

[11] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

## 2.ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ ԵՎ 3.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ[12]

Ծրագրով նախատեսված թվով 19 վիճակագրական աշխատանքներ (200001-200004 և 300001-300015 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

2008թ. ընթացքում, ամսական պարբերականությամբ, ՀՀ ֆինանսների նախարարությունից հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ պետական բյուջեի վերաբերյալ (ըստ ֆինանսավորման), իսկ եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի փաստացի կատարողականի, ինչպես նաև ՀՀ պետական պարտքի (ներքին և արտաքին) վերաբերյալ:

ՀՀ կենտրոնական բանկից (ՀՀ ԿԲ) ամսական, եռամսյակային և տարեկան պարբերականությամբ հավաքագրվել են վիճակագրական տեղեկություններ դրամավարկային և բանկային համակարգի վիճակագրության հիմնական ցուցանիշների վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին ՀՀ անդամակցության շրջանակում, ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել են ՀՀ կենտրոնական և ընդհանուր կառավարության, արտաքին պետական պարտքի, իսկ ՀՀ ԿԲ-ից՝ կենտրոնական բանկի և բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշների և միջազգային պահուստների վերաբերյալ ամփոփ տվյալները և տեղադրվել ՀՀ ԱՎԾ կողմից ՏՏՀՍ ձևաչափով վարվող Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում, իսկ դրանց մեթոդաբանական նկարագրությունները (մեթատվյալները)՝ ԱՄՀ Ստանդարտների տարածման տեղեկագրում ու ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀՀ ԿԲ-ից պարբերաբար ստացվել են նաև ֆինանսական շուկայում ձևավորված ամենօրյա և ամսական միջին փոխարժեքների վերաբերյալ տեղեկություններ:

## 4.ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ[12]

Ծրագրով նախատեսված սույն հատվածի թվով 58 վիճակագրական աշխատանքները (410001, 411001-410014, 412001-412021, 420001-420009, 430001-430009, 440001, 450001, 460001, 470001 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ 15 ամսական, 23 եռամսյակային, 2 կիսամյակային և 18 տարեկան):

Ոլորտի վերաբերյալ սկզբնական վիճակագրական տվյալները հավաքագրվել և մշակվել են թվով 7 պետական վիճակագրական հաշվետվությունների ձևերով (4-ը՝

[12] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

միջազգային ծառայությունների առևտրի գծով, 1-ը՝ օտարերկրյա ներդրումների, 1-ը՝ բնական գազի ներմուծման և 1-ը՝ զբոսաշրջության):

Բացի այդ, արտաքին առևտրի, վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի, համախառն արտաքին պարտքի գծով ցուցանիշների հաշվարկման համար օգտագործվել են վարչական ռեգիստրների՝ մասնավորապես ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացվող բեռնամաքսային հայտարարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարված առևտրի տվյալների բազաները, ՀՀ կենտրոնական բանկից և ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկանքները:

*Կազմվել են.*

-2007թ. IV եռամսյակի և տարեկան, 2008թ. I, II և III եռամսյակների ՀՀ վճարային հաշվեկշիռները և ՀՀ միջազգային ներդրումային դիրքը, ինչպես նաև ՀՀ համախառն արտաքին պարտքը և արտաքին ակտիվները, ըստ տնտեսության հատվածների, ֆինանսական գործիքների և ժամկետայնության: Միևնույն ժամանակ, վերանայվել են ՀՀ 2005-2007թթ. վճարային հաշվեկշիռների, ՀՀ միջազգային ներդրումային դիրքի և ՀՀ համախառն արտաքին պարտքի որոշ հոդվածներ:

*Հավաքագրվել են.*

-*ամսական պարբերականությամբ*՝ տվյալներ արտաքին առևտրի, մասնավորապես բեռնամաքսային հայտարագրերի և ֆիզիկական անձանց կողմից կատարվող առևտրի, բնական գազի ներմուծման և էլեկտրաէներգիայի ներմուծման ու արտահանման ծավալների վերաբերյալ,

-*եռամսյակային պարբերականությամբ*՝ տվյալներ միջազգային ծառայությունների առևտրի (կապ, զբոսաշրջության, տրանսպորտ, մշակույթ, ապրանքներ ձեռքբերված տրանսպորտային կայաններում, ֆինանսական և այլն), օտարերկրյա ներդրումների (ուղղակի, պորտֆելային և այլ՝ ներառյալ միջազգային վարկերը), բանկային վիճակագրության վերաբերյալ:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին անդամակցությամբ պայմանավորված, շարունակվել է վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերի, ապրանքների արտաքին առևտրի մեթատվյալների վերանայումը և զետեղումը վերջինիս Հայաստանի Ազգային ամփոփ տվյալների էջում:

Համաձայն ՀՀ ԱՎԾ և Եվրոստատի միջև կնքված արտաքին առևտրի տվյալների փոխանակման Համաձայնագրի, յուրաքանչյուր եռամսյակ Եվրոստատին ներկայացվել են արտաքին առևտրի տվյալները 8-նիշ կտրվածքով, համապատասխան մակետով, իսկ 2007թ. տարեկան տվյալները նույնպես 8-նիշ կտրվածքով ներկայացվել են նաև ՄԱԿ-ի վիճակագրական բաժին: ՀՀ վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի և արտաքին առևտրի տվյալները եռամսյակային կտրվածքով Ինտեգրացված թղթակցության համակարգի (ԻԹՀ) միջոցով տեղադրվել է ԱՄՀ-ի ինտերնետային էջում:

# 5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ[13]

## 5.1.Ժողովրդագրություն[13]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 20 վիճակագրական աշխատանքների (511001-511008, 512001-512006, 513001-513006) կատարումն ապահովվել է ամբողջությամբ՝ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ: Շարունակվել են բնակչության բնական շարժի, միգրացիայի, սեռատարիքային կազմի հաշվարկի, ծնելիության և մահացության ցուցանիշները բնութագրող ելքային աղյուսակների ստացման համակարգի լրամշակման աշխատանքները: Հիվանդությունների և մահացության միջազգային դասակարգման ՀՄԴ-10 վերանայմանը համապատասխան, շարունակվել են «Բնակչության բնական շարժի» համալիրով ստացվող ելքային աղյուսակների ստացման կառուցվածքում համապատասխան անցումների ապահովման համար համապատասխան տեղեկագրի ճշգրտումները:

2008թ. հունվարի 1-ի դրությամբ անց է կացվել հանրապետության գյուղական բնակչության սեռատարիքային կազմի հաշվառում, որի արդյունքներով Ձև թիվ 9-Ա պետական վիճակագրական հաշվետվություններ են ստացվել բոլոր 866 գյուղական համայնքներից: Դրանցում ամփոփվել են համայնքներում տնային տնտեսությունների քանակի, առկա և մշտական բնակչության թվաքանակի՝ ըստ առանձին տարիքների և տարիքային խմբերի, տնային տնտեսությունների զբաղված անդամներից՝ գյուղատնտեսական և այլ ոլորտներում զբաղվածների թվաքանակի վերաբերյալ ցուցանիշները: Համադրվել, ճշգրտվել են բոլոր գյուղական բնակավայրերի (տարածաշրջանային կտրվածքով) վերոհիշյալ հաշվետվային ձևի հիմնական ցուցանիշները բնութագրող ամփոփ տեղեկագրերը:

Ձև թիվ 9-Ա պետական վիճակագրական հաշվետվության մեքենայական մշակման արդյունքում ստացվել են գյուղական առկա և մշտական բնակչության թվաքանակի, սեռա-տարիքային կազմի, տնային տնտեսությունների քանակի և ՀՀ մարզերի ու տարածաշրջանների զբաղված բնակչության թվաքանակների բաշխումը բնութագրող ելքային աղյուսակներ:

Գյուղական բնակչության սեռա-տարիքային կազմի հաշվառման արդյունքներով պատրաստվել է ՀՀ գյուղական համայնքների (բնակավայրերի) ցանկն ըստ մարզերի մշտական բնակչության թվաքանակի, ինչպես նաև քաղաքային և թաղային համայնքների մշտական բնակչության թվաքանակներն ըստ ընթացիկ հաշվառման տվյալների՝ ի կատարումն «ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծի մշակման գործընթացի 2-րդ փուլի աշխատանքների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» ՀՀ վարչապետի 04.07.2008թ. թիվ 441-Ն որոշմամբ հաստատված ՀՀ 2009թ. բյուջետային

[13] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

գործընթացի իրականացման ժամանակացույցի 23-րդ կետի, ներկայացվել է ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ամսական պարբերականությամբ ՀՀ արդարադատության նախարարության Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԱԿԳ) տարածքային բաժիններից ստացված ծննդյան, մահվան, ամուսնության, ամուսնալուծության ակտերի մշակման արդյունքում ստացվել են ամենամսյա օպերատիվ տվյալներ՝ ՀՀ մարզերի և տարածաշրջանների բաշխմամբ, որոնց հիման վրա ամփոփվել են բնակչության բնական շարժը բնութագրող ցուցանիշների վերաբերյալ տարեկան վիճակագրական ցուցանիշները: 2007թ.-ի ընթացքում, ինչպես նաև 2008թ. հունվարին գրանցված և փետրվարին ստացված, սակայն ծննդյան կամ մահվան փաստացի ժամկետով 2007թ.-ին տեղի ունեցած, ակտերի մշակման արդյունքում ամփոփվել են 2007թ. բնական շարժի վերաբերյալ վերջնական տարեկան վիճակագրական ցուցանիշները, իսկ մեքենայական բազային ցուցանիշների խմբագրման արդյունքում ստացվել են ելքային ցուցանիշները (22 ելքային աղյուսակներ):

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժիններից ստացված ձև թիվ 19՝ «Եկողի հասցեաթերթիկների» և ձև թիվ 20՝ «Մեկնողի հասցեաթերթիկների» մշակման արդյունքում ստացվել են միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ եռամսյակային օպերատիվ տվյալներ, որոնց հիման վրա ստացվել են բնակչության միգրացիոն տեղաշարժերի վերաբերյալ վիճակագրական ցուցանիշները: 2007թ.-ին ստացված վիճակագրական կտրոնների մշակման արդյունքում՝ 2008թ. առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են մեքենայական եղանակով բազային ցուցանիշների խմբագրման և վերջնական ելքային տվյալների ստացման աշխատանքները (12 ելքային աղյուսակներ):

ՀՀ 2001թ. մարդահամարի հիմքով՝ բնական շարժի և միգրացիայի ընթացիկ հաշվառման արդյունքներով, իրականացվել է ՀՀ մարզերի մշտական բնակչության սեռա-տարիքային կազմի հաշվարկը 01.01.2008թ.-ի դրությամբ՝ քաղաքային և գյուղական կտրվածքով:

ԱՄՀ ՏՏՀՍ-ին Հայաստանի Հանրապետության անդամակցության շրջանակում, եռամսյակային պարբերականությամբ, «Բնակչություն» ենթաբաժնի համար հաշվարկվել է բնակչության թվաքանակի միջին ցուցանիշի վերաբերյալ տեղեկատվությունը և զետեղվել ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջում:

Ամսական պարբերականությամբ հաշվարկվել են բնական և մեխանիկական շարժի ամսական օպերատիվ ցուցանիշների հիման վրա՝ ՀՀ բնակչության թվաքանակի միջին ցուցանիշները՝ մեկ շնչի հաշվով ցուցանիշների հաշվարկների համար:

Ի կատարումն 04.07.2008թ. ՀՀ վարչապետի «ՀՀ 2009թ. պետական բյուջեի նախագծի մշակման 2-րդ փուլի աշխատանքների իրականացման ժամանակացույցը հաստատելու մասին» թիվ 441-Ա որոշման, կազմվել է «ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում» գործառնական դասակարգումով 2009թ. բյուջետային հայտը:

ՀՀ 2011թ. մարդահամարի նախապատրաստական աշխատանքների կազմակերպման նպատակով, մշակվել և ՀՀ վիճակագրության պետական խորհրդի (ՀՀ ՎՊԽ) 24.12.2008թ. թիվ 26-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության կանոնադրությունն ու կառուցվածքը:

ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի, Եվրոպական տնտեսական հանձնաժողովի, Եվրոստատի և մի շարք այլ միջազգային կազմակերպությունների հայցերով պատրաստվել և ներկայացվել է տեղեկատվություն՝ բնակչության թվաքանակի, սեռա-տարիքային կազմի, ծնելիության, մահացության և դրա պատճառների, ամուսնության և ամուսնալուծության, կյանքի սպասվող տևողության մասին (երկմաս), ինչպես նաև միգրացիոն տեղաշարժերի՝ եկողների և մեկնողների սեռա-տարիքային կազմի, կրթական մակարդակի, միգրացիայի ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով տեղեկատվություն՝ ըստ ներկայացված հարցաթերթերի:

## 5.2 -5.7.Սոցիալական ոլորտ (առողջապահություն և սոցիալական ապահովություն, իրավական ոլորտ, կրթություն և գիտություն, մշակույթ և սպորտ, բնական պաշարներ և շրջակա միջավայր, բնակարանային ֆոնդ և կոմունալ տնտեսություն) [14]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 104 վիճակագրական աշխատանքները (520001-520040, 530001-530007, 540001-540010, 550001-550009, 550011, 560001-560024, 570001-570013 ծածկագրեր) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Ծրագրով նախատեսված այս ոլորտի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 104 վիճակագրական հաշվետվությունների ձևերով: ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա բնական միջավայրի աղտոտվածության մասին» ամսական տեղեկանքով, «Հայաստանի Հանրապետության տարածքի կլիմայական պայմանների և մակերևութային ջրային օբյեկտների վիճակի գնահատում» եռամսյակային տեղեկանքով և «Մակերևութային ջրերի քանակի և որակի մասին» տարեկան տեղեկագրով, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ամսվա ընթացքում դիտված հիդրոօդերևութաբանական պայմանների մասին» ամսական տեղեկանքով, և ՀՀ առողջապահության նախարարության «Առողջություն և առողջապահություն» տարեկան տեղեկագրով, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության «Հանցագործություններ» տարեկան տեղեկագրով և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկայի վերլուծություն» եռամսյակային ամփոփագրով:

---

[14] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

Սոցիալական ոլորտի վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 67 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 2-ը՝ ամսական, 6-ը՝ եռամսյակային, 5-ը՝ կիսամյակային և 54-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Շրջակա միջավայրի և բնական պաշարների վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 24 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, 1-ը՝ եռամսյակային, 2-ը՝ կիսամյակային, 21-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Բնակարանային-կոմունալ տնտեսության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը հավաքագրվել է 13 վիճակագրական հաշվետվությունների ձևերով, որոնցից 1-ը՝ եռամսյակային, 12-ը՝ տարեկան պարբերականությամբ:

Հավաքագրվող վիճակագրական ցուցանիշները միջազգային չափանիշներին և դասակարգմանը համապատասխանեցնելու, վիճակագրական տեղեկատվություն սպառողների (օգտագործողների) պահանջարկն ամբողջությամբ բավարարելու նպատակով, վերանայվել են այդ ոլորտին առնչվող բոլոր վիճակագրական հաշվետվությունների ձևերը և համապատասխան փոփոխություններ կատարվել ներառված ցուցանիշների կազմում:

Վարչական ռեգիստրների ներդրման և կատարելագործման ուղղությամբ ՀՀ ԱՎԾ-ն համագործակցել է համապատասխան ոլորտները համակարգող նախարարությունների և գերատեսչությունների հետ, որի արդյունքում.

- կրթության ոլորտի վարչական վիճակագրության վարման աշխատանքներն աշխատանքային քննարկումների փուլում են,
- շարունակվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության համակարգում վարչական ռեգիստրի ձևավորման և վարչական վիճակագրության ներդրման աշխատանքները,
- շարունակվել է գործնական օժանդակությունը ՀՀ բնապահպանության նախարարության համակարգում վարչական վիճակագրական ռեգիստրի ամբողջական ձևավորման գործընթացին:

Շարունակվել են աշխատանքները սոցիալական վիճակագրությանն առնչվող ոլորտների համար վիճակագրական տվյալների մարզային բազաների կատարելագործման ուղղությամբ:

Շարունակվել են առողջապահության, բնապահպանական ցուցանիշների հաշվառման համակարգի մշակման աշխատանքները: Աշխատանքներ են տարվել սոցիալական և բնապահպանության վիճակագրության ոլորտներում համապատասխան ցուցանիշների վերանայման և ներդրման ուղղությամբ:

Ընթացքի մեջ են նաև ազգային հաշիվների համակարգում բնապահպանական հաշիվների ներդրման աշխատանքները: Մշակվել և փորձնական ներդրման փուլում են բնապահպանության համակարգում ֆինանսական ներդրումների և ծախսերի ընդհանրացված հաշվառման ձևերը:

## 5.8.Տնային տնտեսությունների հետազոտություններ[15]

Ծրագրով նախատեսված տնային տնտեսությունների հետազոտությունների գծով թվով 13 վիճակագրական աշխատանքները (580001-580013 ծածկագրեր) ամբողջությամբ կատարվել են:

Համաձայն Ծրագրի, 2008թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն անց է կացրել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտություն՝ ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) ֆինանսավորմամբ:

Մարզային կտրվածքով ներկայացուցչական տվյալներ ստանալու նպատակով տնային տնտեսությունների ընտրանքի չափը մեկ տարվա համար կազմել է 7872 տնային տնտեսություն: Յուրաքանչյուր ամիս հետազոտվել է 656 տնային տնտեսություն: Տնային տնտեսությունների ընտրանքում ընդգրկումն իրականացվել է ամենամսյա ռոտացիայի (փոխարինման) եղանակով: Հավաքագրված տվյալների ամփոփումը եկամուտների, ծախսերի, հիմնական սննդամթերքի սպառման և այլ ցուցանիշներով կատարվել է տարեկան կտրվածքով: Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության նախնական տարեկան արդյունքները զետեղվել են եռամսյակային պարբերականությամբ հրապարակվող «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում:

Հետազոտության արդյունքների հիման վրա կատարելագործվել է 2009թ.-ին նախատեսվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության գործիքները՝ հարցաթերթն ու օրագիրը:

Իրականացվել են 2007թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված ընտրանքային հետազոտության տվյալների բազայի տրամաբանական ստուգման և կազմավորման աշխատանքները: Ձևավորված բազայի անվանազերծված տարբերակը հետագա վերլուծության համար տրամադրվել է Համաշխարհային բանկին և «Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ին:

Եռամսյակային պարբերականությամբ ՀՀ կառավարությանը և ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացվել է նվազագույն սպառողական զամբյուղի հաշվարկը՝ միջին ընթացիկ գներով (երկու տարբերակով):

[15] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

## 5.9. Պարենային ապահովություն[16]

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների՝ (590001,590002 ծածկագրեր) կատարումն ապահովվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական և ժողովրդագրական ոլորտների, աշխատանքի վիճակագրության, երեխաների խնամքի և պաշտպանության միջոցառումների, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, գյուղատնտեսական հողերի բարելավման, գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների, բույսերի կարանտինի և պաշտպանության միջոցառումների, ազրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի, անտառպահպանության, անտառպաշտպանության և անտառվերականգնման միջոցառումների և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների աղքատության վերաբերյալ ցուցանիշները, որոնք եռամսյակային պարբերականությամբ հրապարակվել են «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրում:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները՝ կազմվել են 2007թ. առանձին ապրանքախմբերի ազգային պարենային հաշվեկշիռները:

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (ՄԱԿ ՊԳԿ) «Պարենային ապահովության տեղեկատվություն գործողությունների համար» ծրագրի շրջանակներում նշված կազմակերպության փորձագետների կողմից անցկացվող «ԼԻՆՈՒՔՍ» և «ՄայէսՔյուէլ» թեմայով համակարգչային դասընթացների արդյունքում՝ բաժնի աշխատողները շարունակել են իրականացնել պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման, մուտքագրման և վերոհիշյալ կազմակերպության http://www.fao.org/giews/workstation/page.jspx ինտերնետային էջում տեղադրման աշխատանքները:

2008թ. աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել ՀՀ ԱՎԾ ստորաբաժանումների, շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների աշխատակիցների հետ, որոնց արդյունքների հիման վրա վերանայվել և ընդլայնվել են պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի որոշ խումբ ցուցանիշները:

[16] *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*

## 6.ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ[17]

Ծրագրով նախատեսված էր 2008թ. ընթացքում իրականացնել 7 վիճակագրական հետազոտություն: Ընդ որում, դրանցից 1-ը կամ 14.2%-ը պետք է իրականացվեր ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ, իսկ 6-ը կամ 85.8%-ը՝ միջազգային ծրագրերի մասնագիտական ու ֆինանսական օժանդակությամբ (3-ը՝ ՏԱՄԻՍ ծրագրով (իրականացումը՝ 2008-2009թթ. ընթացքում)), 3-ը՝ Շվեդական միջազգային զարգացման գործակալության (ՄԻԴԱ) ֆինանսավորմամբ (իրականացումը՝ 2008-2009թթ. ընթացքում):

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորման հաշվին իրականացվել է ***«Հացահատիկի բերքահավաքի որակի հետազոտություն»-ը:***

Համաձայն «ՏԱՄԻՍ» ծրագրի «Վիճակագրություն-10» պայմանագրի, 2008թ.-ին իրականացվել են հետևյալ 3 վիճակագրական հետազոտությունները.

- *«Առևտրային հավելագնի և տրանսպորտային հավելագնի վերաբերյալ հետազոտություն»՝ «Ծախսեր-Թողարկում» աղյուսակների հետագա մշակման և ներդրման համար անհրաժեշտ տեղեկատվական բազայի ապահովման նպատակով (հետազոտության վերջնական արդյունքների ամփոփումն ավարտվել է 2008թ. դեկտեմբերին, իսկ զեկույցը կհրապարակվի 2009թ. փետրվարին),*
- *«Աշխատուժի ընտրանքային հետազոտություն տնային տնտեսություններում» ոչ ֆորմալ զբաղվածության ուսումնասիրման և դրա չափերի գնահատման նպատակով,*
- *«Անհատական բնակարանային շինարարության ընտրանքային հետազոտություն»՝ գործարկված բնակելի շենքերի քանակը և մակերեսները բացահայտելու, շինարարության վրա կատարված ծախսերը, իրականացված շինարարության ծավալներն ըստ մարզերի ուսումնասիրման նպատակով:*

ՄԻԴԱ-ի ֆինանսավորմամբ 2008թ.-ին իրականացվել են հետևյալ 3 վիճակագրական հետազոտությունները.

- *«Գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի հետազոտություն»-ը՝ գյուղացիական տնտեսությունների ռեգիստրի ձևավորման նպատակով,*
- *«Շրջակա միջավայրի հետազոտություն»-ը՝ բնապահպանական ներդրումների և ծախսերի հաշվառման կատարելագործման, էկոլոգիական սատելիտային հաշիվների շարունակական ներդրման,*
- *«Հայաստանում ժամանակի օգտագործման հետազոտություն»-ը՝ Հայաստանում ժամանակի օգտագործման առանձնահատկությունները ուսումնասիրելու, գենդերային և մի շարք այլ հարցեր ուսումնասիրելու նպատակով:*

2008թ.-ին հրապարակվել են ՀՀ ԱՎԾ կողմից 2007թ.-ին իրականացված «Հաշմանդամների կենսապայմանների հետազոտություն» (Շվեդական միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ) և «Անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տեղեկատվության արդիականացում» (ՏԱՄԻՍ ծրագրի «Վիճակագրություն-10» պայմանագրի շրջանակում) հետազոտությունների արդյունքներով համանուն զեկույցները (հայերեն և անգլերեն):

---

[17] *Տես՝ Ծրագիր, Հավելված II:*

# 7. ՏԵՂԵԿԱՏՎԱՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ[18]

## *7.1-7.5. Վիճակագրական ժողովածուներ (տարեգրքեր), տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, տեղեկատվական ամսական զեկույցներ, վիճակագրական զեկույցներ*[18]

Ծրագրով նախատեսված տեղեկատվահրատարակչական գործունեության մասով, 2008 թվականին, ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են **57 անուն վիճակագրական հրապարակումներ**՝ ներառյալ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին 2008 թվականին ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվել են **20 վիճակագրական ժողովածուներ,** որոնցից 19-ը, ըստ Ծրագրի, իսկ 1-ը՝ «Աղետի գոտին երեկ և այսօր (շինարարական վերականգնողական աշխատանքներ), 1989-2008» երկլեզու (հայերեն և ռուսերեն) վիճակագրական ժողովածուն՝ համաձայն ՀՀ կառավարության 12.06.2008թ. թիվ 641-Ն որոշմամբ հաստատված «1988թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժի 20-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների ծրագրի» հավելվածի 6-րդ կետի:

«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցները կառուցվել են ճյուղային (գերատեսչական) և տեղական (համայնքային) վիճակագրություն իրականացնող մարմինների, վիճակագրական այլ տեղեկություններ տրամադրողների կողմից ներկայացվող պետական վիճակագրական հաշվետվությունների (հարցաթերթերի, տեղեկանքների և այլն), հաշվարկների և ՀՀ ԱՎԾ կողմից դրանց ամփոփման, մշակվող ցուցանիշների, իրականացվող հետազոտությունների, տեղեկատվահրատարակչական գործունեության արդյունքում (ժողովածուներ, տեղեկագրեր, մամուլի հաղորդագրություններ, զեկույցներ) ամփոփված նյութերի հիման վրա: Զեկույցների բովանդակությունը ներկայացվել է ըստ ԱՄՀ մշակած ՏՏԸՀ-ի հատվածների:

Տեղեկատվական ամսական զեկույցներն ամսական պարբերականությամբ ներկայացվել են հակիրճ, եռամսյակային պարբերականությամբ ներկայացվել են առավել մանրամասն, ընդլայնված ու ընդհանրական: Եռամսյակային պարբերականությամբ զեկույցներում ընդգրկվել են «ԱՊՀ երկրների հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների միջազգային համադրումներ»՝ ըստ ԱՊՀ Միջպետական վիճակագրության կոմիտեի տվյալների, «Հետաքրքրաշարժ վիճակագրություն», «Մեթոդաբանական պարզաբանումներ» և «ՀՀ ԱՎԾ փաստացի հրապարակումների ցանկը» հավելվածները:

Զեկույցներում արտացոլված, ինչպես նաև վիճակագրական այլ տեղեկություններ զետեղվել են ՀՀ ԱՎԾ http://www.armstat.am, ինչպես նաև ԱՄՀ http://dsbb.imf.org/Applications/web/dsbbhome/ ինտերնետային էջերում:

---

[18] *Տես՝ Ծրագիր, Հավելված II:*

ԱՄՀ ՏՏՀՍ տեղեկագրում առկա է Հայաստանի վիճակագրության համապարփակ մեթոդաբանությունն անգլերենով, իսկ նույն ստանդարտի ՀՀ ԱՎԾ կողմից վարվող Ազգային ամփոփ տվյալների էջում http://docs.armstat.am/nsdp/՝ երկրի համապատասխան տվյալները:

Միաժամանակ, հրապարակվել են Ծրագրով նախատեսված «Ազգային ամփոփ տվյալների էջը» և 17 **անուն վիճակագրական տեղեկագրեր** (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ) և 4 **անուն վիճակագրական զեկույցներ** (վիճակագրական հետազոտությունների արդյունքներով հրապարակված զեկույցները), ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության սոցիալ - տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը (հայերեն և ռուսերեն):

Հետազոտությունների արդյունքներով հրապարակվել են հետևյալ 4 ***վիճակագրական զեկույցները՝***

- *«Բիզնես-ռեգիստրի ընտրանքային հետազոտության զեկույց», հայերեն և անգլերեն,*
- *«Գյուղատնտեսության ընտրանքային հետազոտության զեկույց», հայերեն և անգլերեն,*
- *«Անհատական բնակարանային շինարարության ընտրանքային հետազոտության զեկույց », հայերեն և անգլերեն,*
- *«Հայաստանի Հանրապետության հաշմանդամների կենսապայմանների ընտրանքային հետազոտության զեկույց», հայերեն և անգլերեն:*

Համաձայն Ծրագրի, «Առևտրային հավելագնի և տրանսպորտային հավելագնի վերաբերյալ հետազոտության» վերջնական արդյունքների ամփոփումն ավարտվել է 2008թ. դեկտեմբերին, իսկ զեկույցը կհրապարակվի 2009թ. փետրվարին:

Համաձայն Ծրագրի, պատրաստվել են. ամսական պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը բնութագրող ընթացիկ-օպերատիվ ամփոփմամբ ստացված նախնական հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները», եռամսյակային պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ - տնտեսական վիճակը բնութագրող մակրոտնտեսական ցուցանիշների համառոտագիր» և ամսական պարբերականությամբ՝ «Հայաստանի Հանրապետության սպառողական գների ինդեքսը» մամուլի հաղորդագրությունները, ինչպես նաև 5 անուն թեմատիկ հաղորդագրություններ (ընդամենը թվով 8 անուն մամուլի հաղորդագրություն):

Համաձայն Ծրագրի, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարզային գործակալությունները (ներառյալ Երևան քաղաքի գործակալությունը) պատրաստվել են 6 անուն վիճակագրական զեկուցագրեր:

Համաձայն «ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ԱՎԾ միջև տեղեկատվության փոխանակման վերաբերյալ» 21.06.2001թ. համաձայնագրի 23 կետի, ՀՀ կենտրոնական բանկին 4 ամսական, 13 եռամսյակային, 4 տարեկան և 3 միանվագ (ըստ անհրաժեշտության) պարբերականությամբ տրամադրվել է ամփոփ վիճակագրական տեղեկատվություն:

## *7.6.Վիճակագրական տեղեկատվության տարածումը ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջի միջոցով և ՀՀ ԱՎԾ բաց գրադարանի գործունեությունը*

Շարունակվել են աշխատանքները ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջի կատարելագործման և վիճակագրական նյութեր տեղադրելու ուղղությամբ: 1999թ.-ից գործող ՀՀ ԱՎԾ ինտերնետային կայքին վիճակագրական տեղեկատվություն սպառողները դիմել են մոտ 445800 անգամ, միայն 2008թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ ինտերնետային հանգույց այցելել են 114000 անգամ կամ 22.6%-ով ավելի 2007թ. համապատասխան ցուցանիշից:

Վիճակագրական տեղեկատվության սպառողների պահանջարկը բավարարելու, վիճակագրական տեղեկատվությունից օգտվելն առավել մատչելի դարձնելու, ինչպես նաև ներկայացվող տեղեկատվությունների շրջանակն ընդլայնելու նպատակով, ՀՀ ԱՎԾ պաշտոնական կայքի արդիականացման ուղղությամբ դեռևս 2006թ.-ին մշակված ծրագրերի հիման վրա, ինչպես նաև Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցության վիճակագրական կարողությունների զարգացման ծրագրի Հոլանդական դրամաշնորհի (թիվ TF 054516) միջոցների հաշվին աշխատող փորձագետների օգնությամբ, 2007թ. մշակվեց նոր ինտերնետային կայքի ստեղծման տեխնոլոգիան և ծրագրային ապահովումը:

2008թ. մայիսի 1-ից շահագործվել է նոր կայքը և դարձել ՀՀ ԱՎԾ պաշտոնական ինտերնետային կայք: Ի լրումն առկա բաժինների, նոր կայքը համալրվել է նաև նոր բաժիններով (օրինակ՝ «Հայաստանի Հազարամյակի զարգացման նպատակներ», Կայքի քարտեզ, և այլն): Կարևորելով «Միջազգային համագործակցություն» բաժնի դերը, այն տեղակայվել է ՀՀ ԱՎԾ կայքի «Գլխավոր Էջ»-ում:

2008թ.-ի ընթացքում ավարտվել է նախկին կայքից դեպի նորը վիճակագրական հրապարակումների տեղափոխման գործընթացը (200-ից ավելի հրապարակումներ): Վիճակագրական հրապարակումները ներկայացվել են «ըստ թեմայի», «ըստ տարիների» և «ըստ տեսակի»:

Ներդրվել է մակրոտնտեսական ցուցանիշների տվյալների բազա՝ ժամանակագրական շարքերով (թարմացումը տեղի է ունենում ամսական պարբերականությամբ) և հնարավոր է դարձել հիմնական ցուցանիշների շարքերը ներկայացնել ցանկացած ժամանակահատվածի համար՝ սկսած 2000թ.-ից: Տվյալների բազան շարունակաբար համալրվում է՝ ի հաշիվ նոր ցուցանիշների ներմուծման:

Մշակվել է կայքում գրանցվելու հնարավորություն, որը վիճակագրական տեղեկատվության սպառողներին հետագայում հնարավորություն կընձեռի նախապես նշել այն հրապարակումների ցանկը, որոնք ցանկալի է ստանալ էլեկտրոնային փոստով, ինչպես նաև վիճակագրական տեղեկատվություն տրամադրողները հետագայում կարող են պետական վիճակագրական հաշվետվությունների լրացված ձևերը ՀՀ ԱՎԾ հանձնել՝ անմիջապես կայքում էլեկտրոնային եղանակով լրացնելու միջոցով:

Նոր կայքի շահագործման արդյունքում արմատապես ձևափոխվել է գրադարանի էջը՝ ստեղծվել է «Գրադարան» տվյալների բազան մոտ 9500 գրքերի անվանումներով և ստեղծվել է փնտրման հնարավորություն՝ ըստ վերջինիս տեսակի, թեմայի և հրապարակման տարեթվի:

Կայքի գլխավոր էջում տեղադրվում են բոլոր վերջին հրապարակումները (պահի դրությամբ)՝ «Վիճակագրական հրապարակումների համացանկը», «Հայաստանի վիճակագրական տարեգիրքը», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցը, ինչպես նաև երկու նոր հրապարակումներ:

2008 թվականին ՀՀ ԱՎԾ կայքում գտնվող բոլոր հրապարակումները՝ սկսած 1999 թվականից մինչև 2008թ. դեկտեմբերի 30-ը, գրվել են նաև լազերային սկավառակների վրա: Նյութերը սկավառակներում տեսակավորված են ըստ հրապարակման լեզուների և տարիների: Նմանատիպ սկզբունքով պատրաստվել է նաև «Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2008»-ը:

ՀՀ ԱՎԾ-ի www.armstat.am կայքն էլեկտրոնային բովանդակության համահայկական երրորդ մրցանակաբաշխությունում, որը կայացել է 2008թ. դեկտեմբերի 26-ին՝վերոհիշյալ մրցանակաբաշխության կազմկոմիտեի կողմից ստացել է ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՄՐՑԱՆԱԿ:

ՀՀ ԱՎԾ բաց գրադարանում 2008թ. տարեվերջին առկա է եղել 9500 միավոր վիճակագրական գրականություն, որից 780-ը ստացվել է 2008թ. ընթացքում: Վիճակագրական գրականությունը համալրվել է աշխարհի տարբեր երկրների վիճակագրական ծառայություններից և միջազգային կազմակերպություններից (60%), ինչպես նաև ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների հաշվին (40%):

2008թ. ընթացքում ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակված վիճակագրական հրապարակումների (ժողովածուներ, տարեգրքեր, տեղեկագրեր (ամսական, եռամսյակային, տարեկան պարբերականությամբ) և զեկույցներ) 2-ական օրինակներ տեղադրվել են գրադարանում:

ՀՀ ԱՎԾ գրադարանի գրանցամատյանում 2008թ. ընթացքում գրանցվել է 410 այցելություն, այդ թվում գիտական ոլորտից՝ 10%, միջազգային կազմակերպություններից՝ 10%, պետական մարմիններից՝ 25% և կրթական ոլորտից՝ 55%: